ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 17 - Ա
12 փետրվարի 2014 թ.

1998 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՑԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Զինապարտության մասին օրենքի>> 5-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. 1998թ. ծնված երիտասարդների բժշկական ստուգումը և կցագրումն անցկացնելու նպատակով.

1) Գեղարքունիքի մարզի տարածքի զինվորական կոմիսարներին՝ հունվար-մայիս ամիսներին անցկացնել 1998թ. ծնված պատանիների կցագրում.
2) հաստատել կցագրման հանձնաժողովների կազմերը համաձայն հավելվածի.
3) հանձնաժողովներին՝ կազմակերպել կցագրման ենթակա երիտասարդների բժշկական քննությունը.
4) առաջարկել համայնքների ղեկավարներին, հիմնարկ-ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ զինվորական կոմիսարիատների ծանուցագրերի համաձայն կցագրման ենթակա պատանիներին ներկայացնել կցագրման տեղամասեր՝ ապահովելով նրանց բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով.
5) մարզի տարածքի հիվանդանոցների և պոլիկլինիկաների տնօրեններին՝
   ա. ապահովել հանձնաժողովներում ընդգրկված բոլոր բժիշկների ամենօրյա պարտադիր մասնակցությունը կցագրման ենթակա պատանիների բժշկական ստուգումներին.
   բ. բժշկական հանձնաժողովներին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով.
   գ. մինչև 2014թ. փետրվարի 15-ը զինկոմիսարիատ ներկայացնել 1998թ. ծնված կցագրման ենթակա պատանիների բժշկական փաստաթղթերը /ձև25/.

6) Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը՝
   ա. ապահովել հասարակական կարգը բոլոր կցագրման տեղամասերում.
   բ. աջակցել կցագրմանը չներկայացած պատանիներին զինկոմիսարիատ բերման ենթարկելու հարցում.
7) մարզի տարածքի ՀՍԳՍ-երի վարիչներին՝ 1998թ.ծնված պատանիներին ապահովել ծննդյան վկայականների պատճեններով.
8) առաջարկել մարզի քաղաքային համայնքների ղեկավարներին՝ կցագրումը անցկացնելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներ և վառելանյութ ձեռք բերելու համար զինկոմիսարիատներին հատկացնել ֆինանսական միջոցներ:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ